ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042; ՀՀ, Հեռ.՝ (37410) 593-030, Ֆաքս՝ (37410) 285-345, էլ. փոստ՝ gdca@aviation.am

N 1.4/16/2113-16
22.11 2016 թ.

ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյանին

Հարգելի Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 306-9 գրությամբ ներկայացված գերատեսչության աշխատակիցների հաստիքների և պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցման, ներկայացնում ենք ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պատասխանը.

Գլխավոր վարչությունում փաստացի աշխատող բոլոր աշխատակիցները՝ միջինը 59 մարդ, 2016 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացել են ընդհանուր գումարով 41408.7 հազար դրամի պարգևատրում, որից 9426.0 հազար դրամը կազմել է քաղաքացիական ծառայողների պարգևատրումը և նվեր՝ 68.0 հազար դրամ արժողությամբ:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 134-րդ և 136-րդ հոդվածները և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Գլխավոր վարչությունը չի կարող տրամադրել տեղեկատվություն՝ ըստ յուրաքանչյուր աշխատակցի պարգևատրումների չափերի:

Հարգանքով՝

Պաշտոնակատար Արսեն Մանուկյան